

Մոմեր

Քրիստիանը մոմեր է վաճառում: Նրա խանութում կա N փաթեթ, յուրաքանչյուրում կարող են լինել տարբեր քանակությամբ մոմեր: Երբ գնորդ է գալիս և խնդրում է K մոմ, Քրիստիանը պետք է բերի ինչ-որ քանակի փաթեթներ այնպես, որ նրանցում եղած մոմերի ընդհանուր թիվը լինի K : Եթե հնարավոր չէ դա անել, օրինակ, եթե որևէ մեկը խնդրում է 4 մոմ, և կա միայն 5 փաթեթ, յուրաքանչյուրում 3 մոմ, ապա գնորդը ձեռնունայն հեռանում է:

Դրա համար Քրիստիանը ցանկացավ իմանալ, թե եղած փաթեթների միջոցով հերթական գնորդի քանի տարբեր հարցումների է նա կարող բավարարել: Նա լուծեց այդ խնդիրը և հիմա ցանկանում է լավացնել այդ արդյունքը: Նա ցանկանում է բացել մի փաթեթ, փոխել նրանում մոմերի քանակը, որ գնորդի հարցումների քանակը, որ նա կարող է բավարարել, որքան հնարավոր է, մեծանա:

Մուտքը

Մուտքի առաջին տողում տրված է մի N ($2 \leq N \leq 100$) ամբողջ թիվ: Երկրորդ տողը պարունակում է իրարից մեկական բացակով անջատված, N ամբողջ B_i ($1 \leq B_i \leq 7\,000$) թվեր: Այդ թվերը ցույց են տալիս փաթեթներում մոմերի քանակները:

Ելքը

Ելքի միակ տողում պետք է արտածել իրարից մեկական բացակով անջատված երկու ամբողջ P և Q թվեր: Նշանակում է Քրիստիանը պետք է վերցնի P մոմ պարունակող փաթեթը և նրանում մոմերի քանակը դարձնի Q : P -ն պետք է հավասար լինի B_i -երից որևէ մեկին: Քանի որ հնարավոր են մի քանի օպտիմալ արդյունքներ, արտածեք ամենափոքր հնարավոր P -ն: Բոլոր այն արդյունքներից, որոնցում P -ն մինիմալ է, ընտրեք այն, որի դեպքում Q -ն ամենափոքրն է: Համարեք, որ Քրիստիանը կարող է մի փաթեթ փոխելով ավելացնել տարբեր պատվերների քանակը, որոնց նա կարող է բավարարել:

Օրինակ

Մուտքը.

4

1 3 4 4

Ելքը

4 9

Բացատրություն:

Օրինակում նկարագրված փաթեթների միջոցով Քրիստիանը կարող է բավարարել 9 տարբեր հարցումների. 1, 3, 4, 5, 7, 8, 9, 11 և 12:

4 մոմ պարունակող փաթեթում մոմերի քանակը դարձնելով 9, նա կարող է բավարարել 1, 3, 4, 5, 7, 8, 9, 10, 12, 13, 14, 16 և 17

հարցումներին, նրանց քանակը դարձնելով 13: